Խախամին եւ Մեղրբեր լչ-ները: Սպերի հովիտը երկու կողմից պատած է խիտ անտառներով, ընտիր փայտով. իսկ դետի ափերը այգեստաններով, պարտէզներով եւ բանջարանոցներով: Լեռներն ունին լճակներ, բիւրաւոր աղբերակներ եւ առուներ, բազմաթիւ առուակներով, որոնք ոռոգում են երկիրը: Ինչպէս բուսականութեամբ, նոյնպէս կենդանիներով, որոնք վխտում են անտառներում, եւ հանքերով հարուստ է այս հովիտը. Նրա անունն ու հռչակը շատ հին է: Սպերի հիւսիսային լեռներից դէպի հարաւ են իջնում եւ Ճորոխին ձախ կողմից խառնւում են, Պարխարեան՝ Սարի-Կայա լեռներից Կինճ, Խոպիստա *եւ* Տանձոտ *առ-րը, որոնք ոռոգում են համանուն գեղերը, իրենց մացրաններով, ախոռներով եւ բարձունքներում ունեցած եայլաներով (ամառանոց): Պալըգ եւ Այղր (Ցովտակ) լճակներից դուրս է գալիս (Որձոր Թէ) Օրձոր առ-ը, ոռոգում է Օրձոր գեղը: Այս առ-ի երկու կողմերը նկատելի են նախնական ժամանակներից մնացած ջրանցքի հետքեր եւ Ցովտակ լճակի ափերում վիշապաղանց չրջանից մնացած գլանաձեւ ժայռէ որձաքարի արձաններ: Քառասնից (Քրքլար*[1]*) լեռներից իջնում են*

---

1 Պարխար լչ-ի Քրքլար – Քառասուն դից – Ջուարթնոց լեռները տեղական ազգաբնակութիւնից մեծ յարգանք ունին, որպէս դից օթեւան: Քառասնից լեռների ինչպէս հարաւային, այնպէս էլ հիւսիսային լանջերից բիւ-